ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Ն ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի արդյունքում 2018թ մարտի 15-ին կնքված պայմանագրում 2018թ մայիսի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: պայմանագիր, կնքված 2018թ-ի.

ժամանակահատվածի համար:

Փոփոխության նկարագրություն:

Համաձայնագրի գինը կազմում է 828 000 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում */ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի թիվ 509-Ն որոշում/:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սամվել Թամրազյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Ն-1
Պետության կարիքների համար շինարարական աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման

ք. Երևան <<25>> մայիսի 2018թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, միասին՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018թ ապրիլի 26-ի թիվ 509-Ն որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018թ. մարտի 15-ին կնքված ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Ն գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Տ-5-25, Մ-3-Լեռնապատ 4.2 կմ երկարությամբ ավտոճանապարհի ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարումը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն Պայմանագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 828000 (ութ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, ընդ որում՝

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900011005718 ՀՎՀՀ 02565518	<< Հալդի Քոնսալթ >> ՍՊԸ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս <<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>>ՓԲԸ Հ/Հ 220001150832000 ՀՎՀՀ 08417251
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
<< >> 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Ն-1 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	*S-5-25, Մ-3-Լեռնապատ 4.2 կմ երկարությամբ ավտոճանապարհի ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ*	-	-	-	-	828000	828000	828000	828000	828000	828000	828000	828000	828000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011005718
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<< Հալդի Քոնսալթ >> ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>>ՓԲԸ
Հ/Հ 220001150832000
ՀՎՀՀ 08417251

(ստորագրություն) Կ.Տ.